

## ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

## Ա. Է ԶՄԻԱԾՆԵ

## Ս. ՅԱԿԱԲԻ ՆԵՐՍԻ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵԼԱԿԱՆ

Պաղտատի նախկին առաջնորդ Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեան օգտուելով Ամենայն Հայոց Հայրապետի պատուիրակ Գեր. Տ. Վահան Արքեպս. Կոստանեանի էջմիածին վերադարձի առիթէն՝ յանձնեց պատուիրակին Ա. էջմիածնի անուան Պաղտատցիներէ նուէր տրուած երկու եպիսկոպոսական զգեստ արծաթաթել ծնուազործ կտորներէ կարուած, նուէրուած Ա. էջմիածնին Պաղտատի բարեպաշտ տիկիններէն.

Տիկ. Աստղիկ Խոկէնտէր Մարգարեանէ շորջառ մը. — Տիկ. Մաղիկ Արգար Յովհաննէսեանէ շորջառ մը. — Տիկ. Ելիզէ Մինաս Մինասեանէ հմիփորոն եւ զգեստի միւս մասերը :

Իր կողմէ պատուիրակին յանձնեց նոյն-պէս եօթ եպիսկոպոսական մատանիներ յանձնելու համար Վեհափառ Հայրապետին, որպէս նուէր Ա. էջմիածնին :

Բացի վերոյիշեալ նուէրներէն Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեան երուսալէմի Պատրիարքական Տեղապահ Գեր. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեանի միջոցաւ իր կողմէ նուէր դրկեց երեւանի Կոնդ Թաղի Ա. Յովհաննէս Եկեղեցին քահանայական մետաքսեայ զգեստ մը իր մասերով եւ սեղանի մեծ սադափէ խաչ մը Ա. Յովհաննէս Եկեղեցւոյ խորանին համար :

Վերոյիշեալ բոլոր նուէրները Պատրիարքական Տեղապահ Գեր. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեանի եւ Գեր. Տ. Վահան Արքեպս. Կոստանեանի միջոցաւ յանձնուած են ըստ պատկանելու:

● Բշ. 1 Հոկտ. — Յիշատակ Մեռելոց. Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յակոբեանց Մայր Տաճարի Ա. Գլխազրի մատրան մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Վարեգին Արքեղայ Դաղանձեան: Յետ Ո. Պատարագի Միարանութիւն եւ Ժողովուրդ թափոր կազմած, նախագահութեամբ Գեր. Տ. Առուբէն Ա. Եպս. Քէմհանձեանի, այցելեցին գերեզմանը Երշանկայիշատակ Տ. Կիւրեղ Ա. Պատր. Հօր, և ապա հին կրտսան ու Զամթաղի գերեզմանավայրերը, ուր կատարուեցան հանգստեան կարգեր:

● Կիր. 7 Հոկտ. — Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յարութեան Տաճարի մեր վերնայարկ մատրան մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Զաւէն Արդ. Զինչինեան:

● Ուր. 12 Հոկտ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնը պաշտըւեցան Ա. Քաղաքիս Դպտոց Ա. Գէորգ Եկեղեցւոյն մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Նորայր Ա. Եպս. Պողաբեանի:

● Եր. 13 Հոկտ. — Ա. Քէրգայ Զօրավարին. Ա. Պատարագը մատուցուեցաւ Դպտոց Ա. Գէորգ Եկեղեցւոյն մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Վարուժան Արքեղայ Դաղանձեան: Քարոզեց Հոգ. Տ. Հայկասեր Վազ. Պայրամեան, բնաբան ունենալով տեթէ ոք կամիցի գալ զինի իմ, ուրասցի զանձն իւրեց: Յետ Ա. Պատարագի Հոգ. Վարդապետ Հայրեց պատուասիրուեցան Դպտոց Հոգ. Տեռէչն: Հանդիսաւոր երթ ու զարձին կը նախագահէր Գեր. Տ. Նորայր Ա. Եպս. Պողաբեան:

Յետ Միջորէի ժամը 2-30ին, Գեր. Եպիսկոպոսունք և Հոգ. Վարդապետ Հայրեց, Գլխաւորութեամբ Գեր. Տեղապահ Ա. Հօր. իշան Ա. Յարութեան Տաճար: «Հրաշափառ»ի հանդիսաւոր մուտքէն և Ա. Գերեզմանի ուխտէն ետք, թափորը Ա. Գերեզմանին շուրջանակի զառնալով բարձրացաւ թ. Գողգոթայի Հայամատուոր, ուր տեղի ունեցան Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին մեծահանգստ նախատօնակը:

● Կիր. 14 Հոկտ. — Տօն Վարազայ Ա. Խաչին. առաւտեան ժամը 6ին, Միարանութիւնը գլւխաւորութեամբ Գեր. Տ. Սուրէն Ա. Եպս. իշան Ա. Յարութեան Տաճար: Գողգոթայի մատրան այցելութիւնն յետոյ առաւտեան ժամերգութիւնը կատարուեցաւ մեր վերնամատուուն մէջ: Ժամը 8ին, պաշտօնական թափորով Տաճար մուտք գործեց Գեր. Տեղապահ Ա. Հայրը: Հանդիսաւոր Ա. Պատարագը Քրիստոսի Ա. Գերեզմանին վրայ մատոյց Գեր. Տ. Սուրէն Ա. Եպս. Քէմհանձեան, որ նաև քարոզեց բնաբան ունենալով «Այլ ինձ քաւլցիս պարծիլ, բայց միայն ի խաչ Տեղան Մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Յետ Ա. Պատարագի Միարանութիւնն և Ժողովուրդ հանդիսաւոր զնացքով վերագարձան Մայրավանք:

